ԵԿԵՂԵՑԻԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Յունվարի 1-ին առաւօտեան ժամի 9-ին Մայր Աթոռոյս միաբանութիւնը ներկայացաւ Վեհափառ Հայրապետին ամանորի շնորհաւորութեան համար և Վեհարանից վերադառնալով Մայր Տաճար կատարեց հայրապետական մաղթանք, որից յետոյ սկսուեց ս. պատարագը, որ մատոյց Մայր Աթոռոյս աւագագոյն անդամ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսը։ Գրքի ժամանակ Վեհափառ Հայրապետը, յառաջնթացութեամբ եպիսկոպոսների եկաւ Տաճար ներկայ եղաւ ս. պատարագին և կայսերական մաղթանքին, որ ըստ սովորութեան կատարուեց ս. պատարագից յետոյ։ Վեհափառ Հայրապետը տաճարից ամբողջ միաբանական դասի առաջնթացութեամբ վերադառնալով Վեհարան ընդունեց Վաղարշապատի գաւառական պաշտօնեաներին, քահանաներին ու ժողովրդին. նորին Սրբութեան ներկայացան Ճեմարանի ուսուցչական խումբն ու աշակերտները։

Յունվարի 6-ին, Ս. Աստուածայայտնութեան տօնին ս. պատարագից յետոյ, որ մատոյց Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը, Մայր Տաճարի մէջ կատարուեց ջրօրհնեաց արարողութիւնը մեծ հանդիսաւորութեամբ. Ս. պատարագին և ջրօրհնեաց արարողութեանը ներկայ էր Վեհափառ Հայրապետը. ժողովրդի ահագին բազմութիւնը խռնուել էր Տաճարում և վանքի բակում։

—Յունվարի 7-ին, Ծննդեան Մեռելոցի օրը, Երևանի Փոխանորդ Տ. Խորէն վարդապետ Մուրադբէգեանը Թեմական խորհրդի և Թեմական դպրոցի հոգաբարձութեան անդամների հետ Երևանից գալով ներկայացաւ Վեհա-

փառ. Հայրապետին նոր տարու և Ծննդեան տօնները շնորհաւորելու համար։

—Սինոդի անդամ Տ. Յովհաննէս արքեպիսկոպոս Շիրակունի և Ղարաբաղի առաջնորդ Տ. Աշոտ եպիսկոպոս տկարութեան պատճառով անցեալ դեկտմ. 9-ին Բարձրագոյն բարեհաճութեամբ արձակուած են պաշտօնից առաջինը՝ Սինոդի անդամութիւնից իսկ երկրորդը Ղարաբաղի առաջնորդութիւնից։

Սինոդի անդամ վարդապետս Տ. Մեսրոպ եպիսկոպոսը, որ Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ Մայր Աթոռի և հայ հոգևորականութեան կողմից ներկայացուցիչ էր կարգուած Մեծ Իշխան հանգուցեալ Միխայիլ Նիկոլայևիչի յուղարկաւորութեանը և թաղմանը բաղդ է ունեցել դեկտեմբերի 28-ին Կովկասեան միւս պատգամաւորների հետ ներկայանալ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ։

Թիֆլիզի ջրաբաշխական վարչութիւնը յարգելով Սինոդի միջնորդութիւնը վճռել է 65 բաշ ջուր ևս տալ Սև ջրից Մայր Աթոռի հողերը ոռոգելու համար, երկու տարի ժամանակ տալով աշխատանքը գլուխ բերելու համար։ Այս հանգամանքը Սինոդը զեկուցեց Վեհ. Հայրապետին ի գիտութիւն և ի տնօրէնութիւն։

Վեհափառ Հայրապետի հրամանով Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսը գնաց Երևան Յունվարի 6-ին Աստուածայայտնութեան հանդիսաւոր ս. պատարագը մատուցանելու և ջրօրհնեաց արարողութիւնը կատարելու ի մխիթարութիւն ժողովրդեան։

Յունվարի 18-ին Մայր Աթոռս ժամանեց Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդի փոխանորդ և Նոր-Ջուղայի Քանանեան դպրոցի տեսուչ Տ. Բագրատ վարդապետ Վարդազարեան և ներկայացաւ Վեհափառ Հայրապետին։

1997-54 ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Публичная библиотека

Մայր Աթոռս ժամանեցին յունուարի 28 և 29-ին Սինոդի անդամներ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը, որ երկու ամսով արձակուրդ էր ստացել Թիֆլիզում բժշկուելու համար և Տ. Մեսրոպ եպիսկոպոսը, որ Վեհ. Հայրապետի կողմից ներկայացուցիչ էր նշանակուած հանդուցեալ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչի յուղարկաւորութեան և թաղման ժամանակ։

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՃԿԱՄՏԱՆՈՒՄ

Պատրիարքարանի կարգադրութիւններ։—Պատրիարքի հրաժարականը։ Երուսաղէմի խնդիր։ Կիլիկիոյ կաթուղիկոսը յետ է վերցրել հրաժարականը։ Զինուորագրութիւնը Թուրքիայում. Դաւառական. Դպրոցական խնդիրներ. Կացութիւնը Հալէպի Նահանգի մէջ։

Բիւզանդիոնում կարդում ենք, որ դեկտեմբեր ի 4-ին Խառն ժողովը զբաղուել է՝

1. Պատրիարքի հրաժարականի խնդրով, որովհետև ազգի և կառավարութեան միջև յարաբերական գործերը առանց պատրիարքի ներկայութեան փափագելի դրութեան մէջ չեն.

2. Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Տ. Դանիէլ Ծ. վարդապետին եպիսկոպոսութեան վկայական է տուել՝ գնահատելով նրա ծառայութիւնը առ ազգն ու եկեղեցին.

3. Արաբկիրի գաւառական ժողովի տեղեկագրի համեմատ Մեհրուժան վարդապետին հաստատել է Արաբկիրի առաջնորդ։

4. Զմիւռնիայի գաւառական ժողովը խնդրած լինելով մի առաջնորդական տեղապահ մինչև որ առաջնորդ կընտրուի, ժողովը առաջնորդական տեղապահ է կարգել Արսէն վարդապետ Վեհունուն.